## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2021 թվականի N 28-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՅՆՔ ԳԵՏԱՄԵՋ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ N 34/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՑԱԽԱՆՈՑԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 33.1-ին, 34-րդ, 35-րդ, 35.1-ին կետերով, հաշվի առնելով Հովհաննես Ազիզբեկյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 01022021-07-0110, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0068) համայնք Գետամեջ 1-ին փողոցի N 34/5 հասցեում գտնվող 11,34 քառակուսի մետր արտաքին մակերեսով ցախանոցը, 40,31 քառակուսի մետր մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 614,7 քառակուսի մետր մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Հովհաննես Ազիզբեկյանին:
2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
1) ցախանոցի և պարիսպի 1 քառակուսի մետրի համար՝ 2 844 (երկու հազար ութ հարյուր քառասունչորս) դրամ (տարածագնահատման 13-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0,1422).
2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 1 878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) դրամ:

3. Հովհաննես Ազիզբեկյանը պարտավոր է վճարել.

1) Գետամեջի համայնքապետարանի 900115112063 հաշվեհամարին՝ 146 900 (մեկ հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր) դրամ՝ ցախանոցի և պարիսպի գինը.

2) Գետամեջի համայնքապետարանի 900115112121 հաշվեհամարին՝ 1 154 410 (մեկ միլիոն հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր տասը) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հովհաննես Ազիզբեկյանի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Ազիզբեկյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի [illegible]

գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2021 թվականի N 29-Ա

### ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու, ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար ստորև նշված աշխատակիցներին և համայնքային ծառայողին խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ հետևյալ չափերով.

1) Համայնքի ղեկավար - 280 000 դրամ,

2) Համայնքի ղեկավարի տեղակալ - 170 000 դրամ,

3) Աշխատակազմի քարտուղար - 251 900 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի մարտի 25
գ.Գետամեջ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2021 թվականի N 30-Ա

## ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Համայնք Պտղնի-1 այգեգործական զանգված 4-րդ թաղամաս թիվ 46 այգետնակ հասցեում գտնվող Գագիկ Սուրենի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02092015-07-0022, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0219-0020-hg/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 12-րդ փողոց N 16 այգետնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի
գ. Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2021 թվականի N 31-Ա

### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1-ին հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումով և հիմք ընդունելով Հրաչ Սիրունյանի ներկայացրած հայտը՝ ***որոշում եմ.***

1. Հրաչ Սիրունյանին համայնք Գետամեջ 15-րդ փողոց թիվ 40 այգետնակ հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0225-0069) այգետնակի վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար տալ նախագծման թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2021 թվականի N 32-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՅՆՔ ԳԵՏԱՄԵՋ 18-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԱՅԳԵՏՆԱԿԻ ՄԱՍԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 33.1-ին, 34-րդ, 35-րդ, 35.1-ին կետերով, հաշվի առնելով Կարեն Աստվածատրյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11022021-07-0112, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0219-0230) համայնք Գետամեջ 18-րդ փողոցի N 8/1 հասցեում գտնվող 9,69 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան մասը, 10,79 քառակուսի մետր արտաքին մակերեսով ջրավազանը, 21,42 քառակուսի մետր մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 399,4 քառակուսի մետր

մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Կարեն Աստվածատրյանին:

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) բնակելի այգետնակի մասի 1 քառակուսի մետրի համար՝4 266 (չորս հազար երկու հարյուր վաթսունվեց) դրամ (տարածագնահատման 13-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0,1422).

1) ջրավազանի և պարիսպի 1 քառակուսի մետրի համար՝ 2 844 (երկու հազար ութ հարյուր քառասունչորս) դրամ (տարածագնահատման 13-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0,1422).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 1 878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) դրամ:

3. Կարեն Աստվածատրյանը պարտավոր է վճարել.

1) Գետամեջի համայնքապետարանի 900115112063 հաշվեհամարին՝ 132 950 (մեկ հարյուր երեսուներկու հազար ինը հարյուր հիսուն) դրամ՝ բնակելի այգետնակի մասի, ջրավազանի և պարիսպի գինը.

2) Գետամեջի համայնքապետարանի 900115112121 հաշվեհամարին՝ 750 080 (յոթ հարյուր հիսուն հազար ութսուն) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Կարեն Աստվածատրյանի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Աստվածատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի

գ.Գետամեջ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ապրիլի 2021 թվականի N 33-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար 2021 թվականին կատարվող գնումների պլանը հաստատելու մասին» N 6-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի [illegible]
գ.Գետամեջ

Հավելված
Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
2021 թվականի ապրիլի 1-ի N 33-Ա որոշման
«Հավելված
Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
2021 թվականի հունվարի 18-ի N 6-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պատվիրատու՝ Գետամեջի համայնքապետարան | | | | | | |
| (ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման)՝ 207025 | | | | | | |
| Ծրագիր՝ Համայնքի 2021 թվականի բյուջեից իրականացվող | | | | | | |
| **Անվանումը՝ Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում** | | | | | | |
| **Բաժին 01 Խումբ 1 դաս 1 ծրագիր 51** | | | | | | |
| Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման | Անվանումը | Գնման ձևը (ընթացակարգը) | Չափման միավորը | | Քանակը | Ընդամենը ծախսերը /դրամ/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 7 | 6 |
| **Ապրանքներ** | | | | | | **2499000** |
| 30197622 | Թուղթ Ա4 | ՄԱ | տուփ | 2300 | 55 | 126500 |
| 30199420 | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | ՄԱ | տուփ | 200 | 5 | 1000 |
| 30192121 | Գրիչ գնդիկավոր | ՄԱ | հատ | 100 | 42 | 4200 |
| 30192128 | Գրիչ գելային | ՄԱ | հատ | 100 | 15 | 1500 |
| 30197234 | Թղթապանակ կոշտ կազմով մեծ (ռեգիստր) | ՄԱ | հատ | 800 | 25 | 20000 |
| 30197232 | Արագակար | ՄԱ | հատ | 80 | 20 | 1600 |
| 22851100 | Արագակար պլաստիկե | ՄԱ | հատ | 450 | 30 | 13500 |
| 30197233 | Թղթապանակ | ՄԱ | հատ | 80 | 30 | 2400 |
| 30197231 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | ՄԱ | հատ | 1000 | 7 | 7000 |
| 30192710 | սոսինձամատիտ գրասենյակային | ՄԱ | հատ | 150 | 20 | 3000 |
| 24911300 | սոսինձ՝ հեղուկ | ՄԱ | հատ | 250 | 10 | 2500 |
| 22811130 | տետր | ՄԱ | հատ | 230 | 3 | 690 |
| 30197322 | կարիչ, 20-50 թերթի համար | ՄԱ | հատ | 850 | 1 | 850 |
| 30197100 | կարիչի մետաղալարե կապեր մեծ | ՄԱ | հատ | 250 | 2 | 500 |
| 30197111 | կարիչի մետաղալարե կապեր փոքր | ՄԱ | հատ | 80 | 5 | 400 |
| 30197112 | կարիչի մետաղալարե կապեր միջին | ՄԱ | հատ | 150 | 2 | 300 |
| 30234400 | դիսկ DVD | ՄԱ | հատ | 100 | 20 | 2000 |
| 30234300 | դիսկ CD | ՄԱ | հատ | 100 | 20 | 2000 |
| 30192125 | մարկեր | ՄԱ | հատ | 200 | 7 | 1400 |
| 30192160 | սպիտակեցնող նյութ (շտրիխ) | ՄԱ | հատ | 275 | 4 | 1100 |
| 30192100 | ռետին | ՄԱ | հատ | 100 | 3 | 300 |
| 30192130 | մատիտ | ՄԱ | հատ | 70 | 10 | 700 |
| 30192210 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 48մմ x100մ | ՄԱ | հատ | 250 | 6 | 1500 |
| 30192220 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 19մմ x36մ | ՄԱ | հատ | 50 | 10 | 500 |
| 30199232 | ծրար Ա4 | ՄԱ | հատ | 50 | 20 | 1000 |
| 30199238 | ծրար Ա6 | ՄԱ | հատ | 20 | 68 | 1360 |
| 30199230 | ծրար Ա5 | ՄԱ | հատ | 30 | 30 | 900 |
| 39241141 | դանակ՝ գրասենյակային | ՄԱ | հատ | 150 | 2 | 300 |
| 09132200 | Բենզին ռեգուլյար | ՄԱ | լիտր | 370 | 2702.7 | 1000000 |
| 34351200 | Տրանսպորտային նյութեր՝ անվադողեր | ՄԱ | հատ | 50000 | 4 | 200000 |
| 33141129 | Դիմակ | ՄԱ | հատ | 30 | 500 | 15000 |
| 24451141 | Ալկոգել | ՄԱ | հատ | 1500 | 30 | 45000 |
| 33621641 | Ախտահանող միջոց սփրեյ | ՄԱ | հատ | 2000 | 20 | 40000 |
| 30211220 | Համակարգիչ | ՄԱ | հատ | 250000 | 1 | 250000 |
| 30237490 | Մոնիտոր | ՄԱ | հատ | 60000 | 1 | 60000 |
| 30237111 | Հոսանքի անխափան սնուցման սարք | ՄԱ | հատ | 50000 | 1 | 50000 |
| 30237111 | Անխափան սնուցման սարքի մարտկոց | ՄԱ | հատ | 10000 | 2 | 20000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 30237112 | Սնուցման բլոկ | ՄԱ | հատ | 25000 | 1 | 25000 |
| 30232231 | կոշտ սկավառակ | ՄԱ | հատ | 60000 | 2 | 120000 |
| 30200000 | Համակարգիչ | ՄԱ | լրակազմ | 475000 | 1 | 475000 |
| **Ծառայություն** | | | | | | **2513000** |
| 66111200 | Բանկային ծառայություններ | ՄԱ | դրամ | 20000 | 1 | 20000 |
| 65211100 | բնական գազ | ՄԱ | խմ | 139 | 2518 | 350000 |
| 65310000 | Էներգետիկ ծառայություններ | ՄԱ | կվտ/ժ | 45 | 5555.5 | 250000 |
| 65200000 | Գազսպառման համակարգի տեխ. Սպասարկում | ՄԱ | դրամ | 30000 | 1 | 30000 |
| 64210000 | Հեռահաղորդակցման ծառայություններ | ՄԱ | դրամ | 228000 | 1 | 228000 |
| 72400000 | Ինտերնետ | ՄԱ | դրամ | 12500 | 12 | 150000 |
| 66511180 | Ապահովագրական ծառայություններ | ՄԱ | դրամ | 35000 | 1 | 35000 |
| 72261170 | Համակարգչային ծառայություններ / ՀԾ/ | ՄԱ | դրամ | 120000 | 1 | 120000 |
| 79211180 | Ներքին աուդիտի ծառայություններ | ՄԱ | դրամ | 300000 | 1 | 300000 |
| 75110000 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | ՄԱ | դրամ | 100000 | 1 | 100000 |
| 79411210 | Գնումների համակարգման ծառայություն | ՄԱ | ամիս | 30000 | 12 | 360000 |
| 79411220 | Գնահատման ծառայություններ | ՄԱ | դրամ | 70000 | 1 | 70000 |
| 50111130 | Ավտոմեքենաների պահպանման և վերանորոգման ծառայություններ | ՄԱ | դրամ | 450000 | 1 | 450000 |
| 50311120 | Քարթրիջի լիցքավորում | ՄԱ | դրամ | 3000 | 9 | 27000 |
| 50311120 | Քարթրիջի թմբուկի փոխարինում | ՄԱ | դրամ | 3000 | 5 | 15000 |
| 50311120 | Համակարգչի վերանորոգում | ՄԱ | դրամ | 8000 | 1 | 8000 |
| | **Աշխատանք** | | | | | **1000000** |
| 45231131 | Համայնքապետարանի խմելու ջրագծի կառուցում | ՄԱ | դրամ | 1000000 | 1 | 1000000 |
| **Ընդամենը** | | | | | | **6012000** |
| **Անվանումը՝ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ** | | | | | | |
| **Բաժին 01 խումբ 3 դաս 3 ծրագիր 51** | | | | | | |
| 72261160 | Համակարգչային ծառայություններ /ՀԿՏՀ. | ՄԱ | դրամ | 72000 | 1 | 72000 |
| 72261160 | Համակարգչային ծառայություններ / Վեկտոր Պլյուս | ՄԱ | դրամ | 44000 | 1 | 44000 |
| 72411700 | Դոմենային անվան | ՄԱ | դրամ | 12000 | 1 | 12000 |
| 72411500 | Հոսթինգի ծառայություններ | ՄԱ | դրամ | 5000 | 1 | 5000 |
| **Ընդամենը** | | | | | | **133000** |
| **Անվանումը՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | | | | | | |
| **Բաժին 01 խումբ 6 դաս 1 ծրագիր 51** | | | | | | |
| | **Ծառայություն** | | | | | **550000** |
| 90511240 | Ջրատարների մաքրման ծառայություն | ՄԱ | դրամ | 250000 | 1 | 250000 |
| 71250000 | Չափագրման ծառայություն | ՄԱ | դրամ | 300000 | 1 | 300000 |
| **Ընդամենը** | | | | | | **550000** |
| **Անվանումը՝ Քաղաքացիական պաշտպանություն** | | | | | | |
| **Բաժին 02 խումբ 2 դաս 1 ծրագիր 51** | | | | | | |
| 75221200 | Ծառայություններ քաղաքացիական պաշտպանության ոլորտում | ՄԱ | դրամ | 10000 | 1 | 10000 |
| **Անվանումը՝ Պաշտպանություն/ այլ դասերին չպատկանող** | | | | | | |
| **Բաժին 02 խումբ 5 դաս 1 ծրագիր 51** | | | | | | |
| 75220000 | Ծառայություններ պաշտպանության ոլորտում | ՄԱ | դրամ | 10000 | 1 | 10000 |
| **Անվանումը՝ Փրկարար ծառայություն** | | | | | | |
| **Բաժին 03 խումբ 2 դաս 1 ծրագիր 51** | | | | | | |
| 75251500 | Փրկարարական ծառայություններ | ՄԱ | դրամ | 10000 | 1 | 10000 |
| **Անվանումը՝ Ճանապարհային տրանսպորտ** | | | | | | |
| **Բաժին 04 խումբ 5 դաս 1 ծրագիր 51** | | | | | | |
| | **Ծառայություններ** | | | | | **0** |
| | **Աշխատանք** | | | | | **4028900** |
| 45231187 | Փողոցների ասֆալտապատում | ԳՀ | դրամ | 4028900 | 1 | 4028900 |
| **Ընդամենը** | | | | | | **4028900** |
| **Անվանումը՝ Աղբահանում** | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Բաժին 05 Խումբ 1 դաս 1 ծրագիր 51** | | | | | | |
| | **Ծառայություն** | | | | | **1500000** |
| 90511150 | Աղբահանություն | ԳՀ | ամիս | 116667 | 12 | 1400000 |
| 90620000 | Այլ ծառայություններ | ՄԱ | դրամ | 100000 | 1 | 100000 |
| **Ընդամենը** | | | | | | **1500000** |
| **Անվանումը՝ Փողոցային լուսավորություն** | | | | | | |
| **Բաժին 06 Խումբ 4 դաս 1 ծրագիր 51** | | | | | | |
| | **Ծառայություն** | | | | | **1100000** |
| 65310000 | Էներգետիկ ծառայություն | ՄԱ | դրամ | 700000 | 1 | 700000 |
| 50231100 | Փողոցային լուսավորության պահպանման ծառայություններ | ՄԱ | դրամ | 400000 | 1 | 400000 |
| **Ընդամենը** | | | | | | **1100000** |
| **Անվանումը՝Այլ մշակութային կազմակերպություններ** | | | | | | |
| **Բաժին 08 Խումբ 2 դաս 4 ծրագիր 51** | | | | | | |
| | **Ապրանքներ** | | | | | **350000** |
| 39220000 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | ՄԱ | դրամ | 200000 | 1 | 200000 |
| 18531100 | Նվերներ | ՄԱ | հատ | 1500 | 100 | 150000 |
| | **Ծառայություն** | | | | | **50000** |
| 50800000 | Հուշարձանների պահպանման ծառայություններ | ՄԱ | դրամ | 50000 | 1 | 50000 |
| **Ընդամենը** | | | | | | **400000** |
| | | | | | | |
| **Ընդհանուրը** | | | | | | **13753900** |

»

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ապրիլի 2021 թվականի N 34-Ա

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Սեդա Խաչատուրովային Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի թիվ 7 հասցեում գործող մանրածախ առևտրի խանութում 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ իրականացնելու.

1) ոգելից խմիչքների արտադրանքի մանրածախ վաճառք.

2) ծխախոտի արտադրանքի մանրածախ վաճառք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի ապրի[illegible]
գ.Գետամեջ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ապրիլի 2021 թվականի N 35-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 41-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը և հաշվի առնելով Հրաչ Սիրունյանի ներկայացրած դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հրաչ Սիրունյանին տալ համայնք Գետամեջ 15-րդ փողոց N 40 հասցեում գտնվող հողամասում այգետնակի վերակառուցման շինարարության թույլտվություն:
2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Գետամեջ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրաչ Սիրունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի ապրիլի
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ապրիլի 2021 թվականի N 36-Ա

## ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հովհաննես Ռուբենի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1076537, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0015-0035/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 38 այգետնակ:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի ապրիլի
գ.Գետամեջ